

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱԾՔ

ՄԱՐԴՍ ինչ որ է՝ այն է . ուրիշներուն կարծիքն և խօսքն զինքն չեն փոխեր : — Սովորաբար մարդիկ իրենց կամ ուրիշի կարծածէն՝ աւելի կամ պակաս են : — Կոր ճամբայ գտնող մարդ չկայ . քեզմէ առաջ ուրիշներն գնացեր են , քեզմէ վերջն ալ ուրիշներն պիտի անցնին նոյն տեղէն : — Կարելի է շատ կատարելութիւն ունենաս , բայց կատարելալ չես : — Խելացի մարդուն բանի մը մէջ անխելք գտնուիլն , և անխելքին բանի մը մէջ խելացի գտնուիլն , նոյնպէս հաւանական են , մանաւանդ թէ առջինն աւելի ստոյգ է :

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ինչո՞ր երկու հաւասար մեծութեամբ մարմիններ իրարմէ հեռու որ ըլլան հեռուն եղածը քան զմէկալը պզտիկ կ'երևայ :

— Վասն զի մարմին մը որչափ հեռանայ մեզմէ՝ անոր տեսութեան անկիւնն ալ երթալով կը պզտիկնայ , որով նոյն մարմինն ալ մեզի պզտիկ կ'երևայ : Բայց ընդհակառակն թէ որ կամաց կամաց նոյն մարմնոյն մօտենանք , տեսութեան անկիւնն ալ երթալով կը լայննայ , որով մարմինն ալ անզգալի կերպով կը մեծնայ :

Ինչո՞ւ երբոր երկայն ծառատունկ ճամբայ մը կը մտնենք , մեզի կ'երևայ թէ երթալով կը նեղնայ , և հեռուի ծառերն ալ պզտիկ կ'երևան թէպէտ և ամէնն ալ հաւասար ըլլան :

— Վասն զի հեռուն եղած ծառերուն ճառագայթները , որ երկու կողմանէ մեր աչքին կը զարնեն , աւելի նեղ անկիւն կը ձևացընեն , քան թէ մօտի եղածները , որով նոյն ճամբան երթալով կարծես թէ կը նեղնայ . նոյնպէս հեռուի ծառերուն գագաթէն և ստորոտէն մեր աչքին եկած ճառագայթները աւելի սուր անկիւն կը ձևացընեն քան թէ մօտինները , անոր համար հեռուի ծառերն ալ պզտիկ կ'երևան :

ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Շատ լեզուներ գիտէ Արշակ , և ճառ և տաղ . Ի՞նչ կը պակսի իրեն . — Ոչինչ , բայց միայն աղ :

ԱՐՁԱՆԱԳԻՐ

Յարտազական գաշտին վառեալ արիագոյնքս ընդգէմ Արեաց
Անկաք ընդ Կարմիրն Վարդանայ
Ի փառս քաջաց ի հայրենեաց յեկեղեցեաց ի սիրելեաց .
Հայկազն ի Մասիս երթ վիմագրեալ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ՎԵՐՈՑԵՐԵԸ արձանագրիս մէջ սրբոյն Վարդանայ ընծայուած մակդիրն՝ մեր նախնեաց ընծայն է , չենք գիտեր ո՞վ նախ և ի՞նչ գրուածքի

մէջ տուեր է , կամ թէ ժողովուրդն այնպէս կոչեր է իր եկեղեցւոյն և տաճարաց պանծալի Վարդն . Դունայ ժողովոյն հին գրուած պատմութեան մէջ կը կարդանք , “ Այս եղև յերկրորդում ամի , , պատերազմի Կարմիրն Վարդանայ յԱրտազա , , կանն դաշտի , , : Ուրիշ հին գրուածքի մը մէջ ալ , “ Քաջն և հզօրն Կարմիր Վարդան , որդի , , դստեր սրբոյն Սահակայ , արարեալ ժողով պա , , տերազմի ընդգէմ Յազկերտի՝ վաթսուն և հինգ , , հազար արանց քաջաց . . . Սակայն Կարմիրն , , Վարդան՝ հանգերձ մեծագործքն Հայոց և գա , , սուց հայրապետացն՝ զմահ յանձն առին յԱր , , տազական գաշտին ի Նպատակ լերինն յաշխարհն , , Աղուանից , խոստովանելով առաջն անհուն զօ , , րաց Պարսկց զհաւատս ճամարիտս . . . Եւ կա , , տարեցան մեծաւ հանգիսիւ արեամբ մահու . , , որ և յիշի ի մէջ եկեղեցւոյս մերոյ՝ մինչև ցայսօր , , ժամանակի . որպէս պատմեաց Եղիշէ աշակերտ , , սրբոյն Մեսրոպայ զիմաստութիւնն Վարդա , , նաց 1 , , :

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ե՛րբ ազգին անունը ո՞րն է , և ուսկից առնուած է , և ո՞րչափ ստուգութիւն ունի մեր ունեցած սովորական կարծիքն :

ԳԻՏԵԼԻՔ

ՔՐԻՍՏՈՍԷ ինչուան հիմայ 1849 տարի կը համրենք , բայց չորս տարի ալ վրան աւելցընելու է ստոյգ Քրիստոսի ծննդեան տարին նշանակելու համար . վասն զի աս թուականը չորս տարի ուշ սեպած է Քրիստոսի ծնունդն : Իսկ Քրիստոսէ առաջ ինչուան աշխարհիս ստեղծումն յայտնի չգիտցուիլ ժամանակն , Աստուածաշնչի զանազան թարգմանութեանց թուականներուն տարբերութեանն համար . ժամանակագրաց ընդունած կարծիքն է 4000 կամ 4004 տարին , հիմայ աւելի ընդունուած է 4963 տարի սեպել՝ այն չորս տարին ալ մէկտեղ . աս հաշուով արարչութենէն ինչուան հիմայ 6812 տարի է :

1 Ուրիշ տեղ կ'ըսէ Ղապան-Թիսնն ուրիշ Վարդանայ :

ՀԱՆԵԼՈՒԿ

ԸՍՏ Արարչին մեծ սահմանի
Է հիմն և բուրջ նա աշխարհի .
Աստուածաշէն տունն է տեղի
Մարդկան ազգի անկոխելի :

ԱՆՅԵԱԼ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԶՈՒՐ :

